## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**06.04.2026թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/28-2 գնման պայմանագրի**

ք. Երևան «12» «05» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՃՇՇ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Աբովյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 06.04.2026թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/28-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը և **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### *1.Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված՝ **Երևան քաղաքի փողոցների միջին նորոգման աշխատանքների** կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել *403 602 000 (չորս հարյուր երեք միլիոն վեց հարյուր երկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն* ՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Հաստատել սույն համաձայնագրի փոփոխված վճարման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3.*Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՃՇՇ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ՀՀ, ք. Երևան, Լեմկինի /Շ/ 14 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011043297 | Հ/Հ 2470084381420000 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 02303869 |
| Վ.Պապիկյան ____________ (ստորագրություն) Կ.Տ | Ս. Աբովյան ____________ (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված թիվ 1
06.04.2026 կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/28-2 գնման պայմանագրի
« 12 » « 05 » 2026թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքների | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 45231188/502 | Երևան քաղաքի Պարոնյան փողոցի (Պարոնյան փ. - Մաշտոցի պ. խաչմերուկից մինչև Պարոնյան փ. - Դեմիրճյան փ. խաչմերուկ) միջին նորոգման աշխատանքներ | ...... | ...... | ...... | ...... | 181200000 | 181200000 | 181200000 | 181200000 | 181200000 | 181200000 | 181200000 | 181200000 | 181200000 |
| 3 | 45231188/503 | Երևան քաղաքի Պռոշյան փողոցի (Պռոշյան փ. - Դեմիրճյան փ. խաչմերուկից մինչև Պռոշյան փ. - Բաղրամյան պ. խաչմերուկ) միջին նորոգման աշխատանքներ | ...... | ...... | ...... | ...... | 79002000 | 79002000 | 79002000 | 79002000 | 79002000 | 79002000 | 79002000 | 79002000 | 79002000 |
| 4 | 45231188/504 | Երևան քաղաքի Սարյան փողոցի (Մաշտոցի պ. – Սարյան փ. խաչմերուկից մինչև Թումանյան փ. – Սարյան փ. խաչմերուկ) միջին նորոգման աշխատանքներ | ...... | ...... | ...... | ...... | 143400000 | 143400000 | 143400000 | 143400000 | 143400000 | 143400000 | 143400000 | 143400000 | 143400000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով.

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011043297
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՃՇՀ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Լեմկինի /Շ/ 14
«Արդշինբանկ» ԲԲԸ
Հ/Հ 2470084381420000
ՀՎՀՀ 02303869

Ս. Աբովյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ.

Արդշինբանկ

№ 1971-6479

«07» 05 2026թ.

ԵՐԱՇԽԻՔ N ՐԲԵՀ26/291-01
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՃՇՀ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 06.04.2026թ.-ին կնքված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/28-2 պայմանագրից և դրա շրջանակներում կնքվելիք թիվ 1 համաձայնագրից (այսուհետ բոլորը միասին՝ պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 65,482,340.0 (վաթսունհինգ միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար երեք հարյուր քառասուն) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար) պահանջը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը ուժի մեջ է տրամադրման պահից և գործում է մինչև 26.10.2027թ.-ը ներառյալ:

Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ sergey.simonyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/28-2 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո՝ առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ վարկերի կենտրոնացված ձևակերպումների բաժնի պետ՝ — Լուսինե Պետրոսյան

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ «ARDSHINBANK» OJSC ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱՍԵՆՅԱԿ HEAD OFFICE 02566492 20014

ՀՀ, 0015, ք. Երևան, Գր. Լուսավորչի փող., 13
(+374 12) 222222 / office@ardshinbank.am / ardshinbank.am

Արդշինբանկ

№ 1971-6480

«07» 05 2026թ.

ԵՐԱՇԽԻՔ N PԲԵՀ26/292-01
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/28 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՃՇՇ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից 06.04.2026թ.-ին կնքված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/28-2 պայմանագրով և դրա շրջանակներում կնքվելիք թիվ 1 համաձայնագրով (այսուհետ բոլորը միասին՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 196,447,020.0 (մեկ հարյուր իննսունվեց միլիոն չորս հարյուր քառասունյոթ հազար քսան) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար) պահանջը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը ուժի մեջ է տրամադրման պահից և գործում է մինչև 26.10.2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ sergey.simonyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/28-2 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո՝ առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ վարկերի կենտրոնացված ձևակերպումների բաժնի պետ՝ Լուսինե Պետրոսյան

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ «ARDSHINBANK» OJSC ԳԼԽԱՄԱՍՆԱՇԵՆՔ HEAD OFFICE 02566492 20014